«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1490

«28» 11 2023 թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Արմեն Աբգարի Մուրադյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԷԱՃԱՊՁԲ-2024/12-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 23.11.2023թ.-ի զեկուցագրով «Սեմ 2017» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 23.11.2023թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատանքների կազմակերպման համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման «ԷԱՃԱՊՁԲ-2024/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սեմ 2017» ՍՊԸ-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները. բացակայել են N 16, 17, 23, 32 չափաբաժինների ապրանքային նշանները և մակնիշները:

Նոյեմբերի 17-ին կայացած նիստում հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել գման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով տեղեկացնել «Սեմ 2017»

ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: /հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետ/:

Նոյեմբերի 22-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ մինչև սահմանված ժամկետի ավարտը գնման ընթացակարգի մասնակից «Սեմ 2017» ՍՊ ընկերությունը Համակարգի միջոցով իրականացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ, ինչի արդյունքում N 16, 17, 32 չափաբաժինների համար որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ N 23 չափաբաժնի համար որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ոչ: Մասնավորապես, N 23 չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ներկայացված «BALLU PLATINUM COMFORT» մակնիշին և «BPHS-11H» մոդելին համապատասխանող օդորակիչի նոմինալ հզորությունը արտադրողի պաշտոնական կայքում տրված է 11.000 BTU/ժ, մինչդեռ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է առնվազն 12.000 BTU/ժ և մասնակցի կողմից ներկայացվել է 12.000 BTU/ժ: Հրավերով սահմանված էր հայտերի գնահատման կարգը, այն է.. «Մասնակցի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի մակնիշը և (կամ) մոդելը պետք է համապատասխանեն միմյանց և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և եթե գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից հայտով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրում է հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ և դրանք սահմանված կարգով չեն շտկվում, մասնակցի կողմից կամ շտկման արդյունքում առաջանում են այլ անհամապատասխանություններ, ապա նշված հանգամանքը որակվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում և հիմք է հանդիսանում տվյալ մասնակցի տվյալ հայտը մերժելու:»: N 23 չափաբաժնի շտկված ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ ապրանքային նշանը, մակնիշը, տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում միմյանց: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Սեմ 2017» ՍՊԸ-ի հայտը ներկայացված N 23 չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել /հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետ/: Նույն նիստի ընթացքում «Սեմ 2017» ՍՊԸ-ի հայտով ներկայացված N 23 չափաբաժինը հայտարարվել է չկայացած պայմանագիր չկնքվելու հիմքով (ապրանքի ամբողջական նկարագրի անհամապատասխանություն հրավերի պահանջներին) /հիմք ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետ/:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում եմ «Սեմ 2017» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատանքների կազմակերպման համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման «ԷԱՃԱՊՁԲ-

2024/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է, ներկայացրել նաև «Սեմ 2017» ՍՊԸ-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները. բացակայել են N 16, 17, 23, 32 չափաբաժինների ապրանքային նշանները և մակնիշները:

2. Նոյեմբերի 17-ին կայացած նիստում հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել գման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով տեղեկացնել «Սեմ 2017» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: /հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետ/:

Նոյեմբերի 22-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ մինչև սահմանված ժամկետի ավարտը գնման ընթացակարգի մասնակից «Սեմ 2017» ՍՊ ընկերությունը Համակարգի միջոցով իրականացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ, ինչի արդյունքում N 16, 17, 32 չափաբաժինների համար որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ N 23 չափաբաժնի համար որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ոչ: Մասնավորապես, N 23 չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ներկայացված «BALLU PLATINUM COMFORT» մակնիշին և «BPHS-11H» մոդելին համապատասխանող օդորակիչի նոմինալ հզորությունը արտադրողի պաշտոնական կայքում տրված է 11.000 BTU/ժ, մինչդեռ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է առնվազն 12.000 BTU/ժ և մասնակցի կողմից ներկայացվել է 12.000 BTU/ժ: Հրավերով սահմանված էր հայտերի գնահատման կարգը, այն է. «Մասնակցի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի մակնիշը և (կամ) մոդելը պետք է համապատասխանեն միմյանց և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և եթե գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից հայտով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրում է հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ և դրանք սահմանված կարգով չեն շտկվում, մասնակցի կողմից կամ շտկման արդյունքում առաջանում են այլ անհամապատասխանություններ, ապա նշված հանգամանքը որակվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում և հիմք է հանդիսանում տվյալ մասնակցի տվյալ հայտը մերժելու:»: N 23 չափաբաժնի շտկված ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ ապրանքային նշանը, մակնիշը, տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում միմյանց: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Սեմ 2017» ՍՊԸ-ի հայտը ներկայացված N 23 չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել /հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետ/: Նույն նիստի ընթացքում «Սեմ 2017» ՍՊԸ-ի հայտով ներկայացված N 23 չափաբաժինը հայտարարվել է չկայացած պայմանագիր չկնքվելու հիմքով (ապրանքի ամբողջական նկարագրի անհամապատասխանություն հրավերի պահանջներին) /հիմք ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետ/:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Ա.Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է, ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված

ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝

«Սեմ 2017» ՍՊԸ-ի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 31.10.2023թ-ին հայտարարված ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«Սեմ 2017» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող հանձնաժողովը 17.11.2023թ. նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով և նույն օրը դրա մասին էլեկտրոնային ձևով ուղարկելով հրավերի իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով տեղեկացնել «Սեմ 2017» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Սեմ 2017» ՍՊ ընկերությունը Համակարգի միջոցով իրականացրել է շտկումներ, որոնց մի մասը համապատասխանել է հրավերով սահմանված պահանջներին, մյուս մասը՝ ոչ:

Գնման ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ սահմանված չէր:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ արձանագրում եմ, որ « Սեմ 2017» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Սեմ 2017» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, գնահատել բավարար:

2. « Սեմ 2017» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Սեմ 2017» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Սեմ 2017» ՍՊԸ	02898105	ք.Երևան, Արգիշտի 7/13 բն.33	X	-	-	28.11.2023թ. ԷԱՃԱՊՁԲ-2024/12-1-ԵՊԲՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

/ ՌԵԿՏՈՐ՝ Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ